ԲԱՆԱԳԵՏ ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Երբեմն մարդու կյանքի ուղին որոշվում է արդեն իսկ վաղ տարիքում, երբ մանկական երևակայության գունեղ աշխարհում ստացած տպավորությունները շարունակում են ուղեկցել մնացյալ ողջ կյանքի ընթացքում: Բանագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի ավագ գիտաշխատող Էսթեր Խեմչյանի կյանքում ևս բանահյուսության հանդեպ հիացմունքը ձևավորվել է դեռ մանուկ հասակում, երբ ծննդավայրի բանասացներից ունկնդիր է եղել ժողովրդական հյութեղ բառուբանով պատմված հեքիաթների ու զրույցների: Ավելի ուշ՝ մանկական այս հիացմունքը պետք է վերածվեր գիտակից մոտեցման, և ժողովրդական այս գանձերը գրառելով կորստից փրկելու մտայնությամբ պայմանավորված՝ պետք է հասունանար ապագա բանահավաքը: Այսպես ինքնաբուխ է ահա սկիզբ առել Է. Խեմչյանի նվիրումը սիրված ոլորտին, որի գրառումը, պահպանումն ու ուսումնասիրումը նա հետագա ողջ կյանքում դարձրել է կարևորագույն մի նպատակ:

Է. Խեմչյանը ծնվել է 1947 թ. ՀՍՍՀ Իջևանի շրջանի Դիտավան (Ռևազլու) գյուղում, ուսուցչի ընտանիքում: Սովորել է նախ գյուղի ութնամյա, ապա՝ Իջևանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1967–1972 թթ. սովորելով և ավարտելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը՝ նույն թվականին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնում՝ գիտական աշխատանքին զուգահեռ ստանձնելով նաև բանահյուսական արխիվի ֆոնդապահի պարտականությունները:

Տասնամյակներ տևած բանահավաքչական ջանադիր աշխատանքները Տավուշի մարզում իրենց շոշափելի արդյունքն ի ցույց են դնում ավելի ուշ, երբ կուտակված հսկայական բանահյուսական նյութերն ամփոփվում են “Հայ ազգագրություն և բանահյուսություն” մատենաշարի երկու առանձին հատորներում՝ Տավուշի (“Տավուշ”, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, 2000) և Իջևանի [“Իջևան (Զորոփոր)”, Հայ ազգագրություն և բա-

նահյուսություն, հ. 25, 2008] մարզի բանահյուսական նյութերի ժողովածուներն ընդգրկող, որոնցում առաջին անգամ ամբողջացված և համակարգված ժանրային կազմով ներկայացվում էր Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հարուստ ու ինքնատիպ բանահյուսական ժառանգությունը: Սեփական գրառումների և բանահավաքչության ընթացքում կուտակված փորձի արդյունքում է ձևավորվել նաև Է. Խեմչյանի թեկնածուական ատենախոսությունը՝ "Տավուշի բանահյուսական ժառանգությունը" վերնագրով՝ տարածաշրջանի բանահյուսության ժանրային կազմն ու հիմնական առանձնահատկություններն ի մի բերող, որը պաշտպանել է 2013 թ.՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Է. Խեմչյանի բանահավաքչական գործունեության մի հետաքրքիր էջ է 1980-ական թվականների Քուռ գետի աջ ափին տեղակայված հայկական Կոզեն գյուղում իրականացրած բանահավաքչությունը: Գրառված բանահյուսական նյութերի արժեքն այսօր մեծ է այնքանով, որ ներկայումս Ադրբեջանի տարածքում գտնվող այս գյուղը հայաթափված է, իսկ բնակիչները ցաքուցրիվ են եղել: Խեմչյանին հետագայում էլ հաջողվել է գտնել այս գյուղից բռնագաղթված և Մասիսի շրջանում ապաստանած կոզենցիներ, որոնցից դարձյալ գրառումներ է կատարել՝ նպատակ ունենալով համալրել այլևս գոյություն չունեցող հայկական այս գյուղի բանահյուսության, պատմության ու բարբառի հնարավոր ամբողջական պատկերը: Նման մղումով է պայմանավորված նաև Ադրբեջանից բռնագաղթված և Տավուշի մարզում հանգրվանած փախստական գարդմանահայերից ու վարդաշենցիներից բանահավաքչության իրականացումը, որը Էսթեր Խեմչյանը կատարում է Մարինե Խեմչյանի հետ:

Վերջին տասնամյակներին Է. Խեմչյանի կատարած աշխատանքներն արդյունավորվել են հատկապես բանահյուսական նյութերի ժողովածուների կազմման ասպարեզում: 2009 թ. բ. գ. թ., ինստիտուտի ավագ գիտաշխատող Սվետլանա Վարդանյանի համահեղինակությամբ կազմել և հրատարակել է բանահավաք Հովհաննես Հովսեփյանի ղարադաղահայերից գրառած բանահյուսական նյութերը ("Ղարադաղի հայեր, Բանահյուսություն, հ. II): 2011–2013 թթ. մի խումբ բանագետների հետ մասնակցել է Սարգիս Հարությունյանի ղեկավարությամբ իրականացվող կորուսյալ Կարս նահանգի բանահյուսական ժառանգությունն ամփոփող ժողովածուի կազմման աշխատանքներին ("Կարս. հայոց բանահյուսական մշակույթը", 2013, համահեղինակներ՝ Ս. Բ. Հարությունյան, Ս. Ա. Վարդանյան, Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Մ. Հ. Խեմչյան): 2013–2015 թթ. դարձյալ հետազոտական խմբի հետ [Ս. Բ. Հարությունյան (ղեկավար), Է. Հ. Խեմչյան, Մ. Հ. Խեմչյան, Ա. Կ. Պո-

դոսյան] աշխատել է պատմական Մոկս գավառի բանահյուսական ժառանգության ուսումնասիրման ուղղությամբ: Հետազոտական աշխատանքներն ամբողջացվել են "Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը" (2015) ստվարածավալ ժողովածուում:

Որպես հետազոտող՝ Է. Խեմչյանի հետաքրքրության շրջանակներն ընդգրկում են բանահյուսական տարբեր ոլորտներ: Մասնագիտական գործունեության ընթացքում հանրապետության գիտական մամուլում և գիտաժողովներում հանդես է եկել մի շարք հոդվածներով՝ նվիրված արևելյան հանրահայտ պատմական դեմքերի (Ալեքսանդր Մակեդոնացի, Դանանդա Բահլուլ, Սողոմոն Իմաստուն, Խիկար Իմաստուն, Լենկ-Թեմուր, Հարուն ալ Ռաշիդ, Շահ Աբաս, Սուլթան Մուրադ և այլք) վիպական կերպավորումների, հայ ժողովրդական հեքիաթների և, մասնավորապես, դրանցում առկա կայուն բանաձևերի քննությանը:

Բանահավաքչական և տեքստաբանական աշխատանքներից զատ, Է. Խեմչյանն աշխատանքներ է տարել նաև ժողովրդագիտության մասսայականացման ուղղությամբ: 1992 թ. վարել է "Մեր պատմական գավառները" խորագրով հոդվածաշարը "Առագաստ" թերթում: 1996–2000 թթ. վարել է "Կանչ" մանկապատանեկան թերթի "Աշխարհի զվարճախոսներ" խորագիրը կրող շարքը, որտեղ հանգամանորեն ներկայացրել է աշխարհի 200 (Բիրբալ, Մոլլա Նասրեդին, Բալակիր և ուրիշներ) ու հայազգի 200 (Պոլոզ Մուկուչ, Պըլը Պուղի, Ծակ Սահակ և ուրիշներ) զվարճախոսներին և նրանց մասին պատմվող զվարճախոսությունները: 1997 թ. "Բումերանգ" թերթում տպագրել է "Հայոց ակունքներից" խորագիրը կրող հոդվածաշարը:

1997–2004 թթ. Է. Խեմչյանը դասախոսություններ է կարդացել Մեծամորի և Երևանի Մ. Խորենացու անվան համալսարանների բանասիրական ֆակուլտետներում:

Այժմ նա ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող 003 (Ժ.01.05) մասնագիտական խորհրդի անդամ է:

Շնորհավորելով Է. Խեմչյանի հոբելյանը՝ մաղթում ենք նրան առողջություն, ստեղծագործական ուժ և եռանդ՝ իրագործելու այն բոլոր ծրագրերը, որոնք դեռ անկատար են մնացել:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ